ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N

ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-25/49

ք. Երևան

«25» դեկտեմբեր 2025

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ավագյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «ՎԱԳՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գրիգոր Սեմիրջյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն՝ սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-ժամանակացույցի* պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր- ժամանակացույցին* համապատասխան և սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանած Տեխնիկական բնութագիր- ժամանակացույցի* պահանջներին չհամապատասխանող Ծառայություն.

ա) չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց ու պահանջել վերադարձնել Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը

2.1.3 միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. քննարկել և ընդունել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության մատուցման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին հայտնել Կատարողին.

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ.

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին.

2.4.4 Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար երրորդ անձանց կողմից խոչընդոտներ հարուցելու՝ կամ պարտավորությունների կատարումը երրորդ անձանցից կախված լինելու պայմաններում այդ անձանց կողմից համագործակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին անհապաղ՝ բայց ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում հայտնել Պատվիրատուին: Սույն կետով սահմանված պարտավորությունը չկատարելու դեպքում Կատարողը զրկվում է Պայմանագրի կետանցի կամ այլ պայմանի խախտման դեպքում երրորդ անձանց կողմից՝ համագործակցելուց հրաժարվելու կամ խոչընդոտներ հարուցվելու հիմքով պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունից:

2.4.5 աշխատանքները կատարել անձամբ,

2.4.6 աշխատանքները կատարել Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետներին համապատասխան,

2.4.7 իր միջոցներով վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով տեղ գտած թերությունները,

2.4.8 Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել աշխատանքների կատարումը շարունակելու կամ դրանց աննպատակահարմարության մասին:

2.4.9 Չտարածել Ծառայությունների մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական, առևտրային, բանկային և/կամ այլ գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ: ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2 Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Պայմանագրի N 3 հավելված):

3.3. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում (բացառությամբ Պայմանագրի 3.4 կետով սահմանված դեպքերի) և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Կատարողի նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Ծառայության մի մասը պատշաճ մատուցված լինելու, իսկ մյուս մասը՝ Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու, սահմանված ժամկետի խախտմամբ մատուցվելու, չմատուցվելու, այդ մասի մատուցման անհնարինության կամ այլ պատճառներով Ծառայության մի մասն ընդունելու անհնարինության դեպքում Ծառայությունը կարող է ընդունվել միայն պատշաճ մատուցված մասով: Մատուցված Ծառայությունը մի մասով ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ՝ Պայմանագրի 3.1 և 3.2 կետերով սահմանված կարգով:

3.5 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.6 Եթե պայմանագրի 3.5 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է չընդունված:

3.7 Արձանագրության ստորագրման պահից Պատվիրատուն սույն պայմանագրի հիման վրա մշակված (ստեղծված, կատարելագործված) համակարգի

(համակարգչային ծրագրերի, ծրագրային մոդուլների) նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք, ներառյալ մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքները: Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի պահանջով անհապաղ վերջինիս հանձնել սույն պայմանագրի հիման վրա մշակված (ստեղծված, կատարելագործված) համակարգի (համակարգչային ծրագրերի, ծրագրային մոդուլների) ելակետային տեղեկատվությունը (SOURCE CODE-երը), որոնք անհրաժեշտ են Պատվիրատուի կողմից Ծառայության արդյունքի հետագա շահագործումն ապահովելու համար:

3.8 Կատարողը սույն պայմանագրի գնի շրջանակներում Պատվիրատուին տրամադրում է սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու նպատակով օգտագործվող (եթե օգտագործվել է) և իր կողմից ստեղծված «ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՕՆԼԱՅՆ /ONLINE/ ՀԱՐԹԱԿ, ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» համակարգչային ծրագիրը (հեղինակային իրավունքի օբյեկտն ի պահ է հանձնվել «Հայհեղինակ» հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող հասարակական կազմակերպությանը 2025 թվականի հուլիսի 17-ին՝ N 08/7163 թվի ներքո) ողջ ծավալով օգտագործելու անժամկետ իրավունք՝ ծրագիրը առանց իր համաձայնության հատուցելի կամ անհատույց հիմունքներով այլ անձանց փոխանցելու իրավունք չվերապահելով: Սույն կետով նախատեսված օգտագործման իրավունքը ներառում է նաև սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում և դրանից հետո Կատարողի կողմից Պատվիրատուի կամ նրա իրավահաջորդների անսահմանափակ քանակով աշխատակիցների կամ Պատվիրատուի ենթակա մարմինների աշխատակիցների համար «ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՕՆԼԱՅՆ /ONLINE/ ՀԱՐԹԱԿ, ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» համակարգչային ծրագիրը (այսուհետ նաև Համակարգչային ծրագիր) օգտագործելու, շահագործելու և Պատվիրատուի, նրա իրավահաջորդների կամ ենթակա մարմինների բնականոն գործունեությունն իրականացնելու համար Համակարգչային ծրագրով կամ այդ ծրագրի օգտագործմամբ բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելու անժամկետ հնարավորությունը: Կատարողը պահպանում է «ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏ

ԿԱՊՎԱԾ ՕՆԼԱՅՆ /ONLINE/ ՀԱՐԹԱԿ, ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» համակարգչային ծրագրի նկատմամբ հեղինակային և/կամ այլ իրավունքները:

3.9 Կատարողն իրավունք ունի սույն պայմանագրի գործողության ընթացքում Համակարգչային ծրագրում թարմացումները, փոփոխությունները, այլ բարելավումները և ծրագրային սխալների ուղղումները կատարել առանց Պատվիրատուի համաձայնության, եթե դրանց կատարումը բխում է սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների որակը կամ Պատվիրատուի էլեկտրոնային համակարգում աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակից՝ ստանձնելով դրանց մասին Պատվիրատուին ողջամիտ ժամկետում նախապես տեղեկացնելու պարտականություն:

3.10 Կատարողը պարտավորվում է մինչև սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Պատվիրատուին օգտագործման իրավունքով հանձնվող Համակարգչային ծրագրում և այլ ծրագրային մոդուլներում որևէ թարմացում, փոփոխություն, համակարգային բարելավում կատարելու կամ ծրագրային որևէ սխալի ուղղում իրականացնելու դեպքում դրանք անհապաղ և առանց որևէ լրացուցիչ վճարի տրամադրել Պատվիրատուին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1040000 (մեկ միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու այդ գինը:

4.2. Սույն պայմանագրի 3.4 կետով սահմանված դեպքում Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության համար վճարման ենթակա՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված վճարը համաչափորեն նվազեցվում և հաշվարկվում է՝ հիմք ընդունելով պատշաճ մատուցված ծառայության և Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող ամբողջական ծավալով

ծառայության հարաբերակցությունը: Պայմանագրի 4.1 կետով սահմանված գումարի և Ծառայության ընդունված մասի դիմաց վճարման ենթակա գումարի տարբերությունը Պատվիրատուի ընտրությամբ վերադարձվում է կամ հաշվանցվում է Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված այլ պայմանագրերով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

4.3. Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում լուծմանը նախորդող ժամանակատվածում վճարված գումարը Պատվիրատուի ընտրությամբ վերադարձվում է կամ հաշվանցվում է Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված այլ պայմանագրերով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

4.4 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Պայմանագրի N 2 հավելված) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-ժամանակացույցի* պահանջներին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից Պատվիրատուի օգտին Պատվիրատուի պահանջի հիման վրա գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից Պատվիրատուի օգտին Պատվիրատուի պահանջի

հիման վրա յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներին:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց.

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1 Պայմանագիրը կարող է ցանկացած պահի միակողմանիորեն վաղաժամկետ լուծվել Պատվիրատուի կամ Կատարողի կողմից: Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները: Պայմանագիրը լուծելու դեպքում կողմերը պարտավորվում են առնվազն երեք օր առաջ ծանուցել միմյանց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7.2. Կողմը, որի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումն անհնարին է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, պարտավոր է Պայմանագրի մյուս կողմերին այդ մասին ծանուցել՝ անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքներն ի հայտ գալու պահից 3-օրյա ժամկետում:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 5 ամիս ժամկետով: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

8.2. Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.3 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.4 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված

խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.6 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

8.7 Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.8 Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.9 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության պահանջը:

8.10 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

8.11 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում

Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքի վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.12 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.13 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.gnumner.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա

հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.12 Պայմանագրի որևէ մասի գործողության դադարեցումը, չեղյալ հայտարարելը կամ անվավերությունը չի հանգեցնում մյուս մասերի դադարեցմանը, չեղյալ հայտարարելուն կամ անվավերությանը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	«ՎԱԳՈՆ» ՍՊԸ
ք.Երևան, Հալաբյան 41/ա	ք.Երևան, Մալխասյանց 25
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00195768
ՀՎՀՀ 01223338	Հ/Հ 2052822104961001
Հ/Հ 900011288025	Ինեկոբանկ ՓԲԸ
Ծառայության գլխավոր քարտուղար	
Ա. Ավագյան	Գ. Սեմիրջյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N1
25 դեկտեմբեր 2025թ կնքված
ՀԱՀԿ-ՄՄԾՁԲ-25/49 Ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/<< դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը**
1	79341230/2	Սույն տեխնիկական բնութագրով սահմանված համակարգը (այսուհետ՝ Համակարգ) նպատակն է սպասարկել << արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից հրապարակվող հարկադիր էլեկտրոնային աճուրդների վերաբերյալ հայտարարությունները և դրանց տեղադրման համար՝ harkadir.ajurd.am դոմենի ներքո վեբկայքի անխափան աշխատանքը, ինչպես նաև նոր մոդուլների և կոմպոնենտների ավելացումը (այսուհետ՝ Կայք): Սպասարկումը պետք է իրականացվի. • Ծառայության աշխատակիցների կողմից հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվելու ենթակա գույքի համար համապատասխան լոտերի ձևավորումը և Կայքում հրապարակման անխափան սպասարկումը, • Ծառայության աշխատակիցների կողմից ուղղակի վաճառքի ներկայացված գույքի ցանկի կազմումը և կայքում հրապարակման անխափան աշխատանքի սպասարկումը, • Կայքի օգտատերերի համար հնարավորություն՝ ստանալ տեղեկատվություն հարկադիր էլեկտրոնային աճուրդների կազմակերպման և անցկացման մասին, գրանցվել Կայքում, առցանց իրականացնել աճուրդներին առնչվող վճարումներ, մասնակցել հրապարակված աճուրդներին, տեղեկատվություն ստանալ ավարտված աճուրդների վերաբերյալ և այլնի սպասարկում, • Անհրաժեշտ է իրականացնել համակարգի աշխատանքի լոգիկայի փոփոխություն անհրաժեշտության դեպքում: Սպասարկումը իրենից ենթադրում է առկա համակարգի ֆունկցիոնալ հատվածի անխափան աշխատանքի ապահովում, ֆունկցիոնալ նոր մոդուլների մշակում և ներդնում, կայքի դիզայնի մասով արդիականացում, web service-ների ներդնում, ադապտիվ դիզայնի շտկում, 24/7 իրական ժամանակում սպասարկում, առաջացած խնդրի շուտափույթ լուծում առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Համակարգը կառուցված է մի քանի աստիճանից, որոնք են՝ լոտի ստեղծում, խմբագրում, հրապարակում, այդ ամենը իրականացվում է տարբեր օգտագործողների կողմից:	դրամ	1040000	1	ք.Երևան, Հալաբյան 41 Ա	Ծառայությունները կմատուցվեն, համապատասխան ժամանակահատվածի համար, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո

		Լոտերի տեսակներն են՝ ակտիվ, սպասվող, ավարտված և կասեցված: Լոտերը տեղադրվում են ըստ կատեգորիաների: Համակարգում ներդրված են Cronjob-եր, որոնց աշխատանքը պետք է վերահսկվի 24/7 սկզբունքով, որևէ տեսակի սերվերային կամ այլ խափանման դեպքում պետք է կարողանալ շուտափույթ համակարգը բերել աշխատող վիճակի: Համակարգում ներդրված է նաև ուղղակի վաճառք, որն աշխատում է այլ սկզբունքով, որը ևս կարիք ունի ֆունկցիոնալ բարելավման: Համակարգում առկա է վճարային համակարգ, որը պետք է 24/7 ռեժիմով սպասարկել, անխափան աշխատանքը ապահովելու համար: Համակարգը նախատեսված է 4 տեսակի օգտվողների գրանցման համար: Բոլոր տեսակի օգտվողները աշխատում են տարբեր լոգիկաներով, և ժամանակ առ ժամանակ հարց է առաջանում տվյալ տեսակի օգտվողների լոգիկայի փոփոխություն, որն իրենից ենթադրում է ամբողջ համակարգի փոփոխություն, օգտվողները նույնպես տարանջատվում են իրենց կցված իրավասություններով, որոնք ևս կարող են փոփոխվեն ժամանակի հետ համընթաց: Աճուրդին մասնակցելու ընթացակարգը ևս փոփոխման ենթակա է: • Կայքի անվտանգության ապահովում չարտոնագրված մուտքերից շուրջօրյա ռեժիմով (24/7) հաշվետվություններ ու այլ տվյալներ օգտատերերի համակարգչից սերվեր փոխանցվելու ընթացքում անվտանգության պահպանման նպատակով պետք է ներդնել և սպասարկել ծրագրային լուծումներ, որոնք կկանխեն փոխանցվող տվյալների արտաքին ներգործությամբ փոփոխումը կամ չարտոնված անձանց կողմից ստանալը/դիտվելը (ներառյալ սպասարկման շրջանակում SSL անվտանգության սերտիֆիկատի ապահովումը), • Օգտագործվող և տվյալների բազայում պահվող բոլոր գաղտնաբառերն ու գաղտնի տվյալները պետք է պահվեն կոդավորված և կոդավորվեն տվյալների փոխանցման ժամանակ, • Ծրագրային ֆայլերը պետք է պաշտպանված լինեն այլ անձանց կողմից փոփոխվելուց, • Ծրագրային թույլատրելի թարմացումների իրականացում CMS-ի մակարդակով, որոնք չեն խափանի առկա/մշակված մոդուլների աշխատանքը • Օգտագործել՝ HTTPS հիպերտեքստի փոխանակման անվտանգ պրոտոկոլի օգտագործում կոդավորված SSL և TLS մեխանիզմներով Անվտանգության ծրագրային լրացումներ (security patches). • Ստեղծել անվտանգության ամբողջական լուծում • Ծրագրային կոդի օպտիմիզացիայի իրականացում: • Տեղեկատվության արտահոսք • Կարգավորումների կառավարում • Ինքնության կառավարում • Նույնականացում • Լիազորություն • Սեսիայի կառավարում • Մուտքային տվյալների ստուգում					

		• Խնդիրների մշակում • Տվյալների կոդավորում • Լոգավորում 1 ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ • Կայքի անվտանգության ապահովում չարտոնագրված մուտքերից շուրջօրյա ռեժիմով (24/7), • Կայքի կառուցվածքային և արտաքին տեսքի փոփոխություններ, նաև բաժինների ծրագրային թարմացում, • Սպասարկողը պետք է ապահովի համակարգի կիբերանվտանգությունը և իրականացնի կիբերանվտանգության ապահովման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները, • Կայքի սպասարկման ժամանակ հայտնաբերված սխալների ուղղում, • Որոնման համակարգերի համար Կայքի օպտիմալացում և համապատասխան կարգաբերումներ, • Կայքի առանձին գրաֆիկական մասերի փոփոխություններ, ըստ պատվիրատուի պահանջի, • Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների և ցանցային ծառայությունների (web-service) անխափան աշխատանքի ապահովում, աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների կամ սխալների վերացում, • Սպասարկողը սպասարկման ընթացքում պետք է իրականացնի ծրագրային համակարգում անհրաժեշտ բոլոր գործողությունները, վերանայի գործող ծրագրային ընթացակարգերը, • Սպասարկման աշխատանքները չեն ենթադրում բացառապես գործող ծրագրային համակարգի աշխատունակության ապահովումը, այլ ներառում են նաև պատվիրատուի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա ծրագրային համակարգի որոշակի ալգորիթմների, մոդուլների վերածրագրավորումը, օպտիմալացումը և այլն, • Սպասարկող ընկերությունը մշտադիտարկման արդյունքում պետք է ծրագրային ստուգումներ ավելացնելով կամ ավտոմատացնելով նվազեցնի, իսկ որոշ դեպքերում իսպառ վերացնի մարդկային սխալանքի հետևանքով առաջացող նաև իրավական հետևանք ունեցող խնդիրները, • Սպասարկողը պետք է իրականացնի ցանկացած ծրագրային փոփոխություն, որի անհրաժեշտությունը կառաջանա որևէ օրենսդրական կամ իրավական այլ ակտերի ընդունմամբ, • << պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները սահմանող իրավական ակտերում Կայքի ծրագրային ապահովմանը, ինչպես նաև տվյալների շտեմարաններին կառուցվածքային կամ տեխնիկական առումով ներկայացվող պահանջների փոփոխման կամ նոր պահանջների սահմանման դեպքում՝ պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետներում Կայքի ծրագրային ապահովման և տվյալների շտեմարանների համապատասխանեցում փոփոխված կամ նոր սահմանված պահանջներին, • Անհրաժեշտության դեպքում սպասարկողը պարտավոր է պատվիրատուի պահանջով ներկայացնի ցանկացած վերծանում, վերլուծություն, լոգավորի և վերծանված ներկայացնի ցանկացած օգտատիրոջ կողմից կատարված բոլոր գործողությունները,					

		• Տարբեր հաշվետվությունների մշակում ըստ պահանջի, • Տարբեր ստատիստիկաների ստեղծում և ներդրում օգագործողների համար, • Կայքը պետք է ունենա այլ համակարգերին ինտեգրվելու հնարավորություն, • Կատարողը (սպասարկողը) պարտավոր է մինչև 2025 թվականի հոկտեմբերի մեկը լրամշակել համակարգը և դրա ֆունկցիոնալ բոլոր բաղադրիչները համապատասխանեցնել «Կատարողական վարույթի մասին» << օրենքին (հղում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=192589), Կատարողը (սպասարկողը) պարտավոր է մինչև 2025 թվականի հոկտեմբերի մեկը առնվազն իրականացնի ստորև նշված փոփոխությունները. 1. Լոտը հարկադիր աճուրդի ներկայացնելիս առաջին աճուրդի մեկնարկային գնի սահմանում ըստ գույքի տեսակների՝ Ոսկերչական և այլ թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված իրեր՝ շուկայական արժեքի 90 տոկոսի չափով Մնացած բոլոր գույքեր՝ շուկայական արժեքի 80 տոկոսի չափով: 2. Լոտի նկարագրությունում (Առաջարկներ-ից հետո) ավելացնել «Գնահատման գին» տողը: (78-րդ հոդվածի 4-րդ մաս) 3. Կայքում անհրաժեշտ է ավելացնել նոր կատեգորիա (կամ գլխավոր մենյու-ում բաժին) նախատեսված շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքի վաճառքի համար: 3.1 Տվյալ կատեգորիայում հրապարակված լոտերի աճուրդի ավարտի հաշվարկային ժամ սահմանել տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելուց հետո 4-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: (79-րդ հոդվածի 1-ին մաս) 4. Ավելացնել հարկադիր աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը կայքում հրապարակելու և տվյալ լոտի աճուրդի մասնակիցների կողմից համակարգում գրանցվելիս տրամադրված էլեկտրոնային փոստերին ուղարկելու հնարավորություն, որտեղ կայքում հրապարակվող և աճուրդի չհաղթող մասնակիցներին ուղարկվող տարբերակում հաղթող մասնակցի տվյալներից պետք է երևա միայն անունը (իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը), այսինքն՝ հաղթող մասնակցի տվյալները պետք է լինեն ապանձնավորված: Արձանագրությունը հաղթող մասնակցին ուղարկվում է ամբողջական տվյալներով: (79-րդ հոդվածի 5-րդ մաս) Նախատեսել հարկադիր աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը էլեկտրոնային եղանակով հարկադիր կատարողին հասանելի դարձնելու, այդ թվում՝ ստորագրելու, ինչպես նաև էլեկտրոնային վարույթի համակարգ ներբեռնելու (ուղարկելու) հնարավորություն: 5. Հաշվապահի էջում (accounting) լոտի գնման գինը հաստատելիս ունենալ վճարման ենթակա գումարը խմբագրելու հնարավորություն՝ այն դեպքերում, երբ գնորդը հանդիսանում է կատարողական վարույթով պահանջատեր և աճուրդում հաղթելուց հետո լոտի գնման գինն ամբողջությամբ չի վճարել, այլ մասնակի՝ հաշվանցելով պարտապանի նկատմամբ իր դրամական պահանջը կամ հարկային գործակալ հանդիսացող գնորդը հաշվանցել է եկամտային հարկը՝ վճարումը հաստատել վճարված գումարի չափով: (80-րդ հոդված) 6. Յուրաքանչյուր հաջորդ հարկադիր աճուրդում եթե աճուրդին մասնակցելու որևէ հայտ չի ներկայացվել կամ աճուրդի ընթացքում լոտի մեկնարկային գնի հավելում չի կատարվել լոտի մեկնարկային գինը նվազում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի 10 տոկոսի չափով, իսկ կրկնաճուրդի մասին ծանուցումը հրապարակվում է հարկադիր աճուրդի ավարտից հետո՝ երրորդ օրը: Լոտի					

		մեկնարկային գինը կարող է նվազել 15 անգամ, որից հետո հաջորդ աճուրդներում մեկնարկային գնի նվազում տեղի չի ունենում: (81-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մաս) 7. Համակարգի կարգաբերումներում պետք է դրվի ժամացույց, ըստ որի նոր կարգավորումները պետք է կիրառվեն «Կատարողական վարույթի մասին» օրենքի ընդունումից հետո հարուցված կամ վերսկսված կատարողական վարույթներով: Նշված օրենքով կիրառվում է «Հարկադիր աճուրդ» տերմինը՝ առանց «էլեկտրոնային» բառի: Միաժամանակ պետք է գործեն նաև հին կարգաբերումները՝ մեխանիզմը, այն վարույթների համար, որոնց նկատմամբ ըստ «Կատարողական վարույթի մասին» օրենքի անցումային դրույթների շարունակվում է կիրառվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքը: 8. Լոտի նկարագրի «Ուշադրություն» և «Աճուրդի ձևը և անցկացման կարգը» հատվածներում հրապարակվող տեղեկատվությունը պետք է լինի երկու տեսակի՝ օրենքի կիրառումից առաջ և հետո կազմակերպվող հարկադիր աճուրդների համար: Նշված հատվածների տեքստը կայքում հրապարակվելու է ինքնաշխատ եղանակով՝ հարկադիր կատարողի կողմից վարույթի տվյալներում մուտքագրված հարուցման/վերսկսման ամսաթվի հիման վրա: «Աճուրդի ձևը և անցկացման կարգը» նոր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված և վերսկսված կատարողական վարույթներով կազմակերպվող հարկադիր աճուրդների դեպքում վերանվանվի «Հարկադիր աճուրդի անցկացման ձևը և կարգը» (նշելով նոր օրենքի դրույթները): 9. Եթե հարկադիր աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը օրենքով սահմանված եռօրյա ժամկետում չվճարվելու հիմքով, ապա լոտի կարգավիճակը փոխվում է չվաճառված և կրկնաճուրդի է ներկայացվում հարկադիր կատարողի որոշման հիման վրա՝ որոշման կայացման երրորդ օրը: (81-րդ հոդվածի 2-րդ) • Ոչ ուշ քան 2025 թվականի հոկտեմբերի 1-ը Կատարողի (սպասարկողի) կողմից պետք է ներկայացվի «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքին Համակարգի համապատասխանեցման պահանջների ամբողջ փաթեթի ողջ ֆունկցիոնալությունն ապահովող համակարգի տարբերակը: Ամբողջությունը ենթադրում է առանց բլոկավորող կամ կրիտիկական սխալների առկայության աշխատող համակարգի տարբերակին հասանելիություն Պատվիրատուի կողմից փորձարկման համար: Պատվիրատուի կողմից հաստատում ստանալուց հետո այն պետք է ներդրվի իրական միջավայրում և տեղայնացվի:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ

ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Հալաբյան 41/ա

ՀՀ ֆինանսների նախարարության

գործառնական վարչություն

ՀՎՀՀ 01223338

Հ/Հ 900011288025

Ծառայության գլխավոր քարտուղար

Ա. Ավագյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԱԳՈՆ» ՍՊԸ

ք.Երևան, Մալխասյանց 25

ՀՎՀՀ ՀՎՀՀ 00195768

Հ/Հ 2052822104961001

Ինեկոբանկ ՓԲԸ

Գ. Լեմիրոջյան

(ստորագրություն)

Հավելված 2
25 դեկտեմբեր 2025թ կնքված
N ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-25/49 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայություն								
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79341230/2	Աճուրդների հետ կապված ծառայություններ	208000	416000	624000	832000	1040000	1040000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ

ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Հալաբյան 41/ա

ՀՀ ֆինանսների նախարարության

գործառնական վարչություն

ՀՎՀՀ 01223338

Հ/Հ 900011288025

Ծառայության գլխավոր քարտուղար

Ա. Ավագյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԱԳՈՆ» ՍՊԸ

ք.Երևան, Մալխասյանց 25

ՀՎՀՀ 00195768

Հ/Հ 2052822104961001

Ինեկոբանկ ՓԲԸ

Գ. Մեսիրջյան

(ստորագրություն)

Հավելված 3
« » 2025թ. կնքված
***ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-25/49** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2025թ. կնքված
***ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-25/49** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն